Trust Audit

Trust Audit CJSC
2/5 A. Armenakyan Street
0047 Yerevan
Republic of Armenia

Tel: +374(10) 516111
Fax: +374(10) 655111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2015թ., հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Նարեկ Մխիթարյան

29 մարտի 2016թ
Երևան

Հազար ՀՀ դրամ	Ծանոթագրություն	2015 31դեկտեմբեր	2014 31 դեկտեմբեր
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	55,769	43,840
Ոչ նյութական ակտիվներ		181	-
Հետաձգված հարկային ակտիվներ	16	421	118
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	8,000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***56,371***	***51,958***
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		7	2,159
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ		60	192
Կանխավճարներ շահութահարկի գծով		-	323
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	12,333	116
Այլ ընթացիկ ակտիվներ		260	104
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***12,660***	***2,894***
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**69,031**	**54,852**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Սեփական կապիտալ	6		
Բաժնետիրական կապիտալ		12,490	12,490
Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)		2,001	(3,772)
Պահուստային կապիտալ		451	451
Ընդամենը սեփական կապիտալ		***14,942***	***9,169***
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	42,062	30,834
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***42,062***	***30,834***
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ		16	3,635
Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ	8	11,013	11,214
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		998	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***12,027***	***14,849***
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**69,031**	**54,852**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

		Ըստ բնույթի	
Հազար ՀՀ դրամ	Ծանոթագրություն	2015	2014
Ծառայությունների մատուցումից հասույթ		5,627	3,841
ՀՀ Պետական բյուջեի դրամաշնորհներից եկամուտ		91,355	27,266
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ		3,339	625
Այլ եկամուտ		2,026	176
Ընդամենը եկամուտներ		**102,347**	**31,908**
Աշխատանքի վարձատրություն		(56,096)	(20,021)
Հեռուստահաղորդումների արտադրության ծախսեր		(14,012)	(3,225)
Մաշվածություն և ամորտիզացիա		(7,057)	(862)
Հեռարձակման ծախսեր		(5,263)	(2,478)
Այլ ծախսեր	17	(13,384)	(5,096)
Ընդամենը ծախսեր		**(95,812)**	**(31,682)**
Զուտ շահույթ մինչև հարկումը		**6,535**	**226**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում		(762)	(88)
Տարվա շահույթ		**5,773**	**138**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		**5,773**	**138**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Ըստ բնույթի կազմված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ (կուտակված վնաս)	Պահուստային կապիտալ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ	**12,490**	**(3,910)**	**451**	**9,031**
2014թ զուտ շահույթ	-	138	-	**138**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ	**12,490**	**(3,772)**	**451**	**9,169**
2015թ զուտ շահույթ	-	5,773	-	**5,773**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ	**12,490**	**2,001**	**451**	**14,942**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Զուտ շահույթ	5,773	138
Շահութահարկի գծով ծախս	762	88
Շահույթ մինչև շահութահարկը	6,535	226
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	7,057	862
Ֆինանսական ծախսեր	157	191
Պաշարների (աճ)/նվազում	2,152	(495)
Դեբիտորական պարտքերի և այլ ընթացիկ ակտիվների (աճ)/նվազում	299	(31)
Կրեդիտորական պարտքերի և այլ ընթացիկ պարտավորությունների աճ/(նվազում)	(1,871)	(223)
Վճարված շահութահարկ	(64)	(88)
Վճարված տոկոսներ	(157)	(191)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**14,108**	**251**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում)/օտարում	(17,500)	(6,166)
Ոչ ընթացիկ այլ ակտիվների (աճ)/նվազում	8,000	(8,000)
Ակտիվներին վերաբերող շնորհների աճ/(նվազում)	11,228	14,404
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**1,728**	**238**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների (վճարում)/ստացում	(3,619)	(437)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոնցերի զուտ հոսքեր	**(3,619)**	**(437)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	12,217	52
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	116	64
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**12,333**	**116**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ